ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 2018թ-ի հունիսի 5-ին կնքված N ԳՀԾՁԲ-8/8-5 ծածկագրով գնման պայմանագիրը 2018թ. դեկտեմբերի 20-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «Նժդեհի հաց կեր ու զորացիր» չափաբաժնի մասով:

Փոփոխության նկարագրություն Հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «Նժդեհի հաց կեր ու զորացիր» չափաբաժնի մասով:

Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 2 480 000 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամով և կազմում է 345 000 (երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում: Չի հակասում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Գրիգորյանին:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ a.*grigoryan. mil.am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-8/8-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20-ը դեկտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և Ա/Ձ Իրինա Մելքոնյանը, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ հիմք ընդունելով 05.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/8-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «Նժդեհի հաց կեր ու զորացիր» չափաբաժնի մասով:

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 2 480 000 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամով և կազմում է 345 000 (երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Ա/Ձ Իրինա Մելքոնյան ք. Երևան, Շերամի 47շ., բն.28 «Ինեկոբանկ» ՓԲԸ, Մալաթիա-Սեբաստիա մ/ճ Հ/հ 2050932101641001 ՀՎՀՀ 32523869
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ի. ՄԵԼՔՈՆՅԱՆ